

**ՎԱԶԳԷՆ Ա. ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄՕՔ ԱԶԳԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՒՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ**

ՄԵԾԱՅԱՐԳ ՏԻԱՐ ԴԱՆԻԷԼ ՏՕՐԵԱՆԻՆ
ՀԱՐԱԶԱՏ ՈՐԴՒՈՅ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ
ՈՂՋՈՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

ԳԷՅՄԲՐԻՋ

Բարին Աստուած մեզի կը պարգեւէ Մեր Առաքելական Սուրբ Եկեղեցիին հոգեւոր առաքելութեան ծառայողները Մեր Հաւատացեալ ժողովուրդի ծոցին մէջ, ի Հայաստան եւ ի սփիւռս աշխարհի, վայելելով նաեւ գործօն աջակցութիւնը եւ բարոյական քաջալերանքը մեր ազնիւ հաւատացեալ զաւակներուն:

Այդ հոգին կը գործակցիք նաեւ Դուք, յարգելի Պրն. Տօրեան, որ աւելի քան կէս դար գիտակցութեամբ եւ նուիրումով ծառայած էք Մեր Սուրբ Եկեղեցւոյն հանգրուաններով: Հիմնադիրներէն մէկը Հայ Եկեղեցւոյ Երիտասարդաց Կազմակերպութեան եւ Էլիզաբեթ Նիւ-Ճըրզիի Սուրբ Աստուածածին Եկեղեցւոյ շինութեան յանձնախումբի անդամ: Ապա Պօսթընի մէջ եղած էք Թեմական Պատգամաւոր, Թեմական Խորհուրդի անդամ եւ երկու տարի նաեւ ատենապետ Տարեկան Թեմական Պատգամաւորական Ժողովին:

Արդարեւ բարձր կը գնահատենք Ձեր 50-ամեայ նուիրեալ վաստակը եւ ընդառաջելով Միացեալ Նահանգաց Արեւելեան Թեմի Հայոց Առաջնորդ Գերաշնորհ Տ. Խաժակ Արքեպիսկոպոս Պարսամեանի միջնորդութեան, այժմ նկատելով Ձեզի կը յղենք Մեր Հայրապետական օրհնութիւնը եւ կը շնորհենք «ՍՈՒՐԲ ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ» շքանշանը կրելու իրաւունք, աղօթելով, որ Տէրը պարգեւէ Ձեզի երկար տարիներու կեանք, քաջառողջութեամբ եւ ընտանեկան երջանկութեամբ:

«Ողջ լերուք զօրացեալ Սուրբ Հոգւով եւ յաւէտ օրհնեալ ի Տեառնէ եւ ի Մէնջ»: Ամէն:

Վազգէն Ա
Կթղկս Ամ. Հայոց

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 8 Յուլիսի
1994 Փրկչական ամի
եւ ի թուականիս Հայոց ՌՆԽԳ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի:

թիւ 2042